Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 10-ի N 412 - Ն որոշման

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու և դադարեցնելու ընթացակարգերն ու պայմանները:

2. Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված նշանակությունները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով ներդրումներ կատարելու դեպքում J59.11 կամ J59.12 տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ունեցող ֆիլմարտադրողը կարող է ստանալ մասնակի վերադարձ՝ համաձայն կարգի և սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափով:

2. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ներդրումների մասնակի վերադարձը ստանալու նպատակով ֆիլմարտադրողը պետք է կինեմատոգրաֆիայի ազգային մարմին ներկայացնի՝

1) հայտ (ձևը մշակում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը և հրապարակում իր պաշտոնական կայքում).

2) իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի տված պետական գրանցման վկայականի պատճենը.

3) ֆիլմի սցենարը՝ նշելով ֆիլմի արտադրման ժամկետները.

4) դերասանական կազմի վերաբերյալ տվյալներ (անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, հանրային ծառայությունների համարանիշը/առկայության դեպքում/ և աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն).

5) ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերի ցանկը (որը կազմվում է սույն որոշման N 2 հավելվածի սահմանված ցանկի հիման վրա) և դրանք հիմնավորող փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածի:

5. Հայտերի ներկայացման ժամանակացույցը և հայտերի ընդունման պարբերականությունը սահմանում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը:

6. Կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի կողմից ստեղծված և կից գործող մասնագիտական խումբը 7 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու բովանդակությունը:

7. Ներկայացված փաստաթղթերը ոչ ամբողջական լինելու, ինչպես նաև դրանցում թերություններ կամ տեխնիկական սխալներ հայտնաբերելու պարագայում կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը առաջարկում է ֆիլմարտադրողին 10 աշխատանքային օրվա ընթացքում համալրել անհրաժեշտ փաստաթղթերը կամ շտկել առկա թերությունները՝ դրա մասին Էլեկտրոնային ծանուցումների միասնական հարթակի միջոցով կամ գրավոր կամ էլեկտրոնային փոստով ֆիլմարտադրողին ծանուցելու միջոցով:

8. Կարգի 7-րդ կետով սահմանված գործընթացը ֆիլմարտադրողի կողմից չապահովվելու դեպքում ներկայացված հայտը մերժվում է:

9. Կարգի 6-րդ կետում սահմանված ժամկետը կասեցվում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի կողմից ֆիլմարտադրողին ներկայացված փաստաթղթերը համալրելու կամ շտկելու ծանուցում ուղարկելու օրվանից մինչև կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի կողմից այդ փաստաթղթերի ստացման օրը:

10. Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո իրականացվում է կարգի 6–րդ կետով սահմանված գործընթացը, որի ավարտից հետո մեկօրյա ժամկետում մասնագիտական խումբը կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի գործադիր տնօրենին է ներկայացնում փաստաթղթերի ուսումնասիրության

արդյունքը՝ հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով օրենքի 18-րդ հոդվածով սահմանված դրույթները:

11. Ամփոփելով մասնագիտական խմբի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքը կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի գործադիր տնօրենը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ներդրումների մասնակի վերադարձը բավարարելու կամ մերժելու մասին եզրակացությունը և ֆիլմարտադրողի կողմից հայտին կից ներկայացված փաստաթղթային փաթեթի հետ միասին ներկայացնում է լիազորված պետական մարմնին:

12. Լիազորված պետական մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու կամ մերժելու մասին:

13. Լիազորված պետական մարմինը հաստատում է ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների համաձայն:

14. Լիազորված պետական մարմնի կողմից ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու մասին որոշում կայացվելուց հետո կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիլմարտադրողի հետ կնքում է պայմանագիր, որով սահմանվում են ֆիլմարտադրողի պարտավորությունները հայտով ներկայացված ֆիլմարտադրության բովանդակային և արտադրական պայմանների ապահովման վերաբերյալ և նշված պայմանները խախտելու դեպքում համապատասխան կարգավորումների վերաբերյալ:

15. Լիազորված պետական մարմինը հայտը մերժում է օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների համաձայն:

16. Ֆիլմերը, որոնց վերաբերյալ լիազորված պետական մարմնի կողմից որոշում է կայացվել ներդրումների մասնակի վերադարձը մերժելու մասին, չեն կարող այլևս հայտ ներկայացնել այն ստանալու նպատակով:

17. Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը օրենսդրությամբ սահմանված վերահսկողության տվյալների կամ այլ հիմնավորված փաստերի հիմքով իրավասու է իր կողմից տրված դրական

եզրակացությունը փոփոխել և լիազորված պետական մարմնին ներկայացնել բացասական եզրակացություն, որի հիման վրա լիազորված պետական մարմնի որոշման համաձայն ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները հետ են գանձվում պետական բյուջե:

18. Լիազորված պետական մարմնի կողմից որոշում է կայացվում ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու, իսկ հատկացված միջոցները պետական բյուջե հետ գանձելու մասին՝ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված հիմքերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ